ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ԻՌԱ ՀՐԱՆՏԻ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ըմբիշների օրինակով)

ԺԹ 00.01 – «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. **Հրանտ Միքայելի Ավանեսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. **Արսեն Բաղդասարի Լոքյան** Մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆ. **Արմեն Լևոնի Գրիգորյան**
Առաջատար կազմակերպություն	Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026թ. հունիսի 25-ին, ժ. 16:00-ին Երևանի պետական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲԿԳԿ-ի հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թ. մայիսի 22-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Դ. Ռ. Հայրապետյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից բարձրակարգ սպորտում որոշումների կայացման արդյունավետությունը հանդիսանում է մարզիկների հաջողության առանցքային գործոն: Ըմբշամարտը բնութագրվում է արագ փոփոխվող իրավիճակներով, բարձր անորոշությամբ և ճնշման պայմաններում տակտիկական-տեխնիկական որոշումների անհրաժեշտությամբ: Միջազգային վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարձրակարգ ըմբիշների մարզական արդյունքների վատթարացման 42%-ը կապված է որոշումների կայացման արդյունավետության անկման հետ: Ըմբշամարտի կանոնակարգային փոփոխությունները (2018, 2021 թթ.) էական ազդեցություն են ունեցել որոշումների կայացման ռազմավարությունների վրա՝ պահանջելով նոր մոտեցումներ: Հայաստանում ըմբշամարտը առաջատար մարզաձևերից մեկն է, սակայն որոշումների կայացման հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները կազմում են սպորտային հետազոտությունների ընդամենը 5-7%-ը: Հայկական մարզիչների միայն 22%-ն է կիրառում որոշումների կայացման հմտությունների զարգացմանն ուղղված հատուկ վարժություններ, մինչդեռ զարգացած երկրներում այս ցուցանիշը կազմում է 78-85%: Ներկայումս բարձրակարգ ըմբիշների հոգեբանական պատրաստությունը իրականացվում է հիմնականում փորձի վրա հիմնված, ոչ թե գիտականորեն հիմնավորված մեթոդներով: Գիտության միջառարկայական զարգացման ներկայիս փուլում անհրաժեշտ է համատեղել սպորտային հոգեբանության, հոգեֆիզիոլոգիայի և նեյրոկոգնիտիվ գիտության տվյալները՝ ստեղծելով համապարփակ մոդել: Հետազոտության արդյունքները կնպաստեն հայկական ըմբշամարտի միջազգային մրցունակության բարձրացմանը և կարող են կիրառվել նաև այլ մենամարտային սպորտաձևերում:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Գիտական գրականության համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015-2022 թվականներին ըմբշամարտում որոշումների կայացման ուսումնասիրության ոլորտում հրապարակումների քանակը աճել է 287%-ով: Նշանակալի առաջընթաց է գրանցվել մարզիկների կոգնիտիվ գործընթացների նեյրովիզուալիզացիայի, աչքի շարժումների և ուշադրության կենտրոնացման, մետակոգնիտիվ գործընթացների և ինտուիտիվ ռազմավարությունների ուղղություններում: Սակայն առկա տեսական մոդելները չեն հաշվի առնում մի շարք առանցքային հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական գործոններ՝ ռեակցիաների արագություն, մետակոգնիտիվ գործընթացների արդյունավետություն, սթրեսի ֆիզիոլոգիական հետևանքների ազդեցություն: Հետազոտությունների 78%-ը կենտրոնացած է եղել առանձին գործոնների ուսումնասիրության վրա՝ չբացահայտելով դրանց համալիր փոխազդեցությունը: Հայաստանում ըմբշամարտի ոլորտում որոշումների կայացման հոգեբանական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրություններ գործնականում չեն իրականացվել: Բացակայում են համապարփակ տեսական

մոդելներ, որոնք կբացատրեին ըմբիշների որոշումների կայացման մեխանիզմները մրցակցային պայմաններում: Հայաստանի ՖԿՍՊԻ-ի ուսումնական ծրագրերում որոշումների կայացման թեմային հատկացվում է ընդամենը 4-6% ուսումնական ժամաքանակի, մինչդեռ միջազգային սպորտային ակադեմիաներում այս ցուցանիշը կազմում է 15-20%: Մեթոդական ուղեցույցների նշանակալի պակասը և գիտականորեն հիմնավորված միջամտությունների բացակայությունը հիմնավորում են սույն հետազոտության անհրաժեշտությունը:

Հետազոտության օբյեկտը: Բարձրակարգ ըմբիշների որոշումների կայացման գործընթացը:

Հետազոտության առարկա: Մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման գործընթացի արդյունավետության վրա ազդող հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական գործոնների համալիրը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման արդյունավետություն պայմանավորված է հոգեֆիզիոլոգիական գործառույթների կայունությամբ, մասնավորաես հոգեշարժողական հակազդումների ճշգրտությամբ, ինչպես նաև որոշումերի կայացման անհատական ոճերի վրա անդրադարձող անձնային առանձնահատկություններով:

-մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման անհատական ոճի արդյունավետությունը պայմանավորված է հոգեֆիզիոլոգիական գործառույթների կայունությամբ, մասնավորապես պարզ ռեակցիայի արագությամբ, բարդ ռեակցիայի ճշգրիտ ընտրությամբ, շարժվող օբյեկտի ժամանակային ճշգրտությամբ:

-մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման անհատական ոճի արդյունավետությունը պայմանավորված է անձնային առանձնահատկություններով՝ հուզական կայունությամբ, գիտակցական վերաներդրման ցածր մակարդակ (ավտոմատացված որոշումների կայացման ոճով), իրավիճակին արագ հարմարվելու ունակությամբ:

Հետազոտության նպատակը: Հետազոտել մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման արդյունավետության վրա ազդող հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական գործոնների համալիրը և դրանց հիման վրա մշակել արդյունավետ որոշումների կայացման համակարգային մոդել:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Իրականացնել մրցակցային պայմաններում որոշման կայացման տեսական և փորձարարական հետազոտությունների համակարգային վերլուծություն՝ բացահայտելով դրանց կիրառելիությունը ըմբշամարտի համատեքստում:
2. Բացահայտել բարձրակարգ ըմբիշների շրջանում որոշման կայացման հոգեբանական առանձնահատկությունները և ռազմավարությունների տարբերությունները՝ ստեղծելով տիպաբանություն ըստ որոշման կայացման ոճերի:

3. Փորձարարական ճանապարհով ուսումնասիրել բարձրակարգ ըմբիշների հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների և որոշման կայացման ոճերի ազդեցությունը որոշման կայացման արդյունավետության վրա:
4. Մշակել և փորձարկել բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման արդյունավետությունը բարձրացնող համալիր հոգեբանական մոդել՝ հիմնված էմպիրիկ տվյալների վրա:
5. Ձևավորել գործնական առաջարկներ ըմբիշների հոգեբանական պատրաստվածության համակարգում որոշման կայացման արդյունավետության բարձրացման նպատակով, որոնք համապատասխանում են Հայաստանի սպորտի զարգացման ռազմավարությանը:

Հետազոտության մեթոդական և տեսական հիմքը: Մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնների ուսումնասիրությունը ըմբիշների շրջանում հիմնված է ժամանակակից հոգեբանական գիտության մեթոդաբանական սկզբունքների և սպորտային հոգեբանության տեսական մոտեցումների վրա: Հետազոտության տեսական և մեթոդական հիմքերն են՝ քննարկվող Գերդ Գիգերենցերի (Gerd Gigerenzer, 2013) և Ռայնհարդ Զելտենի (Reinhard Selten, 2001) որոշումների կայացման արագ և խնայող հևրիստիկ մեխանիզմների վերաբերյալ տեսությունները: Ա.Ե. Էրիքսոնի և Ջ. Սմիթի (John Smith, 1996) մասնագիտական կատարողականի և փորձագիտական գործունեության փոխհարաբերությունների տեսությունը, ինչպես նաև Ռ. Մարտենսի (R. Martens, 1987) և Ա.Մ. Ուիլյամսի (A.M. Williams, 2019) աշխատությունների ներկայացված սպորտային հոգեբանության հիմնական սկզբունքների մասին:

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են նաև սպորտային հոգեբանության ժամանակակից հետազոտական մոտեցումները՝ Բ.Ն. Շուստինի (Шустин Б. Н., 2021) և Ա.Վ. Ռոդիոնովի (Родионов А.В., 2017) մշակումները բարձրակարգ մարզիկների հոգեբանական պատրաստության մոդելավորման ոլորտում, Դ.Բ. Ֆիշմանի (D.B. Fishman, 1999) հայեցակարգային մոտեցումները հոգեբանական պրակտիկայում առանձին դեպքերի համակարգված վերլուծության վերաբերյալ, ինչպես նաև Ռ.Ֆ. Բորնշտեյնի (Bornstein, R. F., 2016) սկզբունքները ապացույցների վրա հիմնված հոգեբանական գնահատման մեթոդաբանության մասին:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունում կիրառվել են հետևյալ մեթոդները. դիտում, հարցազրույց, թեստավորում, փորձագիտական հարցում: Հավաքագրված տվյալների վերլուծության համար կիրառվել են հետևյալ վիճակագրական մեթոդները. Կորելյացիոն վերլուծություն (Պիրսոնի և Սպիրմենի կորելյացիոն գործակիցներ), Գործոնային վերլուծություն, Կլաստերային վերլուծություն, Բազմակի ռեգրեսիոն վերլուծություն, Դիսպերսիոն վերլուծություն (ANOVA), Ոչ պարամետրական մեթոդներ (Ման-Ուիթնիի U-թեստ): Տվյալների

վիճակագրական վերլուծությունն իրականացվել է SPSS 26.0 ծրագրային փաթեթի միջոցով:

Հետազոտության ընտրանքի ընդհանուր բնութագիրը: Հետազոտությանը մասնակցել են 60 բարձրակարգ ըմբիշ (սպորտի վարպետներ, միջազգային կարգի սպորտի վարպետներ, սպորտի վաստակավոր վարպետներ), որոնք բաժանվել են երկու խմբի՝

1. Միջազգային մրցաշարերում բարձր արդյունքներ ցուցաբերած ըմբիշներ (աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրներ) - 30 հոգի
2. Հանրապետական մակարդակի մրցաշարերում հաջողությունների հասած բարձրակարգ ըմբիշներ - 30 հոգի

Մասնակիցների տարիքային միջակայքը կազմել է 18-32 տարեկան (միջինը՝ 23 տարեկան): Հետազոտությանը մասնակցել են նաև 15 փորձագետ, բարձրակարգ մարզիչներ, որոնց մարզչական փորձը միջինում կազմել է 15 տարի:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ընտրվել է յուրօրինակ մոտեցում սպորտային հոգեբանության պրակտիկայում համակարգված և բազմաբաղադրիչ ուսումնասիրության ենթարկելով ըմբիշների մրցակցային պայմաններում որոշումների կայացման արդյունավետությունը պայմանավորող գործոնների համալիրը:

Հետազոտությունը լրացնում է սպորտային հոգեբանության ոլորտում առկա գիտելիքները՝ բացահայտելով ըմբշամարտի մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, որոնք նախկինում չեն եղել համակարգված ուսումնասիրության առարկա Հայաստանում: Հատկապես կարևոր է, որ հետազոտվել են հոգեֆիզիոլոգիական գործոնները՝ ռեակցիայի տարբեր տեսակների արագությունը, ուշադրության կայունությունը և դրանց ազդեցությունը որոշումների կայացման որակի վրա:

Էական գիտական արժեք ներկայացնում է մշակված բազմագործոն մոդելը, որը ինտեգրում է ըմբշամարտում որոշումների կայացման արդյունավետության տարբեր ասպեկտները՝ մարզիկների անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոշումների կայացման ոճերի նախապատվությունները, մրցակցային ճնշման գործոնների ազդեցությունը և տակտիկական մտածողության դրսևորումները: Այս մոդելը հիմք է ստեղծում ըմբշամարտում որոշումների կայացման ավելի խորը իմացության համար և թույլ է տալիս կանխատեսել մարզիկների մրցակցային արդյունավետությունը: Ինչպես նաև, սենսորոմոտոր պարամետրերի ուսումնասիրման փորձարկված մեթոդների համալիրը կարող է հաջողությամբ ներդրվել կիրառական հոգեբանության հարակից ոլորտների հետազոտություններում:

Հետազոտության տեսական նշանակությունը: Հետազոտության արդյունքները նպաստում են մրցակցային պայմաներում որոշումների կայացման հոգեբանական տեսության զարգացմանը և լրացնում են սպորտային հոգեբանության ոլորտում առկա գիտելիքները: Բացահայտված են ըմբշամարտի

մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, որոնք նախկինում չեն եղել համակարգված ուսումնասիրության առարկա Հայաստանում: Հետազոտությունը ընդլայնում է հոգեֆիզիոլոգիական գործընթացների և որոշումների կայացման ոճերի փոխազդեցության վերաբերյալ պատկերացումները, ինչպես նաև ճնշման պայմաններում կոգնիտիվ գործընթացների դրսևորումների մասին: Արդյունքները հարստացնում են սպորտային հոգեբանության մեթոդաբանական հենքը՝ ցույց տալով քանակական և որակական մեթոդների համատեղ կիրառման արդյունավետությունը: Հետազոտությունը նպաստում է միջառարկայական մոտեցումների ամրապնդմանը՝ համատեղելով հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական և սպորտագիտական տվյալները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է ստացված արդյունքների ուղղակի կիրառելիության մեջ ըմբշամարտի մարզումային գործընթացի օպտիմալացման և մարզիկների հոգեբանական պատրաստության բարելավման ուղղություններով:

Մշակված բազմագործոն մոդելը և ախտորոշիչ գործիքակազմը հնարավորություն են տալիս մարզիչներին և սպորտային հոգեբաններին օբյեկտիվ գնահատել ըմբիշների որոշումների կայացման արդյունավետությունը և անհատականացնել մարզումային գործընթացը: Փորձարկված տասներկուշաբաթյա ինտեգրատիվ ծրագիրը ապացուցել է իր արդյունավետությունը և կարող է ներդրվել Հայաստանի ըմբշամարտի ազգային հավաքականների և մարզական դպրոցների պրակտիկայում՝ առանց հատուկ սարքավորումների անհրաժեշտության:

Հետազոտության արդյունքները կիրառելի են մարզիչների պատրաստման համակարգում՝ որպես ուսումնական մոդուլներ ՖԿՍՊԻ-ում, սպորտային ընտրության գործընթացում՝ երիտասարդ ըմբիշների ներուժի վաղ նույնականացման նպատակով, ինչպես նաև այլ մենամարտային սպորտաձևերում՝ ձյուդո, սամբո, բռնցքամարտ:

Ստացված տվյալների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովվում է հետևյալ չափանիշներով. թեման քննարկվել է ԵՊՀ Փիլիսոփայության և Հոգեբանության ֆակուլտետի Ընդհանուր հոգեբանության ամբիոնում, ներկայացվել երկու գիտաժողովում, վերլուծվել է ժամանակակից գիտնականների գիտական աշխատանքների ծավալուն վերլուծություն՝ ավելի քան 180, փորձագետ մարզիչների մասնակցություն (գիտական աստիճան, գիտական փորձ, մարզչական գործունեություն ավելի քան 10 տարի): Ատենախոսության արդյունքներն ունեին լայն հանրային ներկայացում՝ մասնակցություն երկու միջազգային գիտաժողովների, 8 հրապարակումներ գիտական ամսագրերում:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ:

1. Մրցակցային պայմաններում ըմբիշների որոշումների կայացման արդյունավետությունը որոշվում է չորս փոխկապակցված ենթահամակարգերի՝ հոգեֆիզիոլոգիական, կոգնիտիվ, հոգեբանական և

մարզա-տեխնիկական գործոնների դինամիկ փոխազդեցությամբ, որոնց մեկուսացված զարգացումը չի ապահովում օպտիմալ արդյունավետություն:

2. Հոգեֆիզիոլոգիական ենթահամակարգում բարդ շարժողական ռեակցիան և շարժվող օբյեկտի ռեակցիայի ճշտությունը հանդիսանում են որոշումների կայացման արդյունավետության ամենաուժեղ կանխատեսիչները, սակայն միջազգային մակարդակի ըմբիշների առավելությունը կայանում է այս գործընթացների համակարգված աշխատանքի և իրավիճակային հարմարեցման արդյունավետության մեջ:
3. Որոշումների կայացման ոճերի տիպաբանությունը արտացոլում է կոգնիտիվ ռազմավարությունների անհատական նախապատվությունները, որտեղ ռացիոնալ և ինտուիտիվ ոճերի ճկուն համադրումը բնորոշ է վարպետ ըմբիշներին, իսկ խուսափողական և կախյալ ոճերի դոմինանտությունը պահանջում է նպատակաուղղված հոգեբանական միջամտություն:
4. Մետակոգնիտիվ գործառույթները, որոնք ներառում են սեփական կոգնիտիվ գործընթացների ռեֆլեքսիան, մոնիտորինգը և կարգավորումը, ապահովում են որոշումների կայացման համակարգի ինքնակազմակերպումը և ադապտացիան, որոնց անբավարարությունը դրսևորվում է կրկնվող տակտիկական սխալներով և մրցակցային իրավիճակների կառավարման անարդյունավետությամբ:
5. Մրցակցային անհանգստության և որոշումների կայացման արդյունավետության միջև առկա է հակադարձ U-տիպի կախվածություն, որտեղ օպտիմալ մակարդակի անհանգստությունը նպաստում է որոշումների արդյունավետությանը, իսկ ինքնավստահության մակարդակը միջնորդավորում է անհանգստության ազդեցությունը:
6. Տասներկուշաբաթյա ինտեգրատիվ զարգացման ծրագիրը, որը համադրում է հոգեֆիզիոլոգիական օպտիմալացումը, կոգնիտիվ ռազմավարությունների ընդլայնումը, մետակոգնիտիվ կարողությունների ձևավորումը և հոգեհուզական կարգավորման տեխնիկաները, ապացուցել է իր արդյունավետությունը՝ մրցակցային իրավիճակների մոդելավորման և զարգացնող վարժությունների առավելագույն ազդեցությամբ:

Ատենախոսության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի Ընդհանուր հոգեբանության ամբիոնի ընթացիկ նիստերում, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի Ա. Լալայանի անվ. Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստերում, ՀՀ և միջազգային գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում:

Աշխատանքի հիմնական արդյունքները ներկայացված են յոթ հոդվածներում և երեք գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ներածություն, գրականության ակնարկ և վերլուծության երկու գլուխ, երրորդ գլուխ ուսումնասիրության մեթոդաբանություն

և պլանավորում, ուսումնասիրության վերլուծություն, արդյունքներ և քննարկում, եզրակացություններ, գրականության ցանկ և հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունը** ներկայացնում է թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, սահմանված հետազոտության վարկածը և ենթավարկածները, օբյեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Ներածության մեջ բացահայտված է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության իրականացման փուլերն ու ընտրանքի համակազմը, հետազոտության փորձաքննությունը, հուսալիությունն ու հավաստիությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Մրցակցային պայմաններում մարզիկի որոշման կայացման հիմնախնդրի տեսամեթոդական վերլուծություն»** գլխում վերլուծվում են որոշումների կայացման հիմնական տեսական մոտեցումները, մրցակցային պայմաններում որոշումների ուսումնասիրության ժամանակակից մեթոդները և սպորտային գործունեության մեջ որոշումների արդյունավետությանը ազդող գործոնները: **1.1. Որոշման կայացման հիմնական տեսական մոտեցումների համեմատական վերլուծություն** ենթագլխում ներկայացվում են ռացիոնալ-նորմատիվ, սահմանափակ ռացիոնալության, հևրիստիկաների, բնական որոշումների և կրկնակի մշակման տեսությունները: **1.2. Մրցակցային պայմաններում որոշման կայացման ուսումնասիրության ժամանակակից մոտեցումները** ենթագլխում՝ կոգնիտիվ ծանրաբեռնվածության կառավարումը, իրավիճակային իրազեկվածությունը, տեսողական որոնման ռազմավարությունները, մրցակցային ճնշման ազդեցությունը և հուզական կարգավորման տեխնիկաները:

1.3. Որոշման կայացման գործոններն ու ռազմավարությունները սպորտային գործունեության մեջ ենթագլխում ներկայացվում են որոշումների արդյունավետության վրա ազդող գործոնները՝ կոգնիտիվ, ընկալողական, ֆիզիկական, հուզական, տակտիկական, որոշումների կայացման վերլուծական և ինտուիտիվ մոտեցումները, ճանաչողության հիման վրա որոշումների մոդելը (Քլայն), որոշումների կայացման հմտությունների զարգացման մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ըմբշամարտում որոշման կայացման հոգեբանական առանձնահատկությունները»** գլխում վերլուծվում է ըմբշամարտ մարզաձևի հոգեբանական բնույթը, ըմբիշների որոշումների կայացման գործընթացների առանձնահատկությունները, որոշումների արդյունավետության վրա ազդող գործոնների համալիրը և արդյունավետ որոշումների կայացմանը նպաստող մոդելներն ու մեթոդները:

2.1. Ըմբշամարտ մարզաձևի բնույթը և հոգեբանական առանձնահատկությունները ենթագլխում նկարագրվում են ըմբշամարտի մրցակցային դինամիկությունը, անորոշությունը, ժամանակային սահմանափակումները և ըմբիշների մասնագիտական գործունեության հոգեբանական պահանջները: **2.2. Ըմբշամարտում որոշման կայացման**

գործընթացների վերլուծություն ենթագլխում մանրամասն վերլուծվում են որոշումների կայացման փուլերը, տեղեկատվության մշակման հատկանիշները, ժամանակային ճնշումը և հոգնածության ազդեցությունը: **2.3. Ըմբիշների որոշման կայացման արդյունավետության վրա ազդող գործոնները**՝ համակարգված ներկայացվում են հոգեֆիզիոլոգիական, կոգնիտիվ, հուզական, մետակոգնիտիվ, անձնային և որոշումների կայացման ոճերի գործոնները: **2.4. Ըմբշամարտում արդյունավետ որոշումների կայացմանը նպաստող մոդելներ և մեթոդներ** ենթագլխում ներկայացվում են որոշումների կայացման տեսական մոդելները, հմտությունների զարգացման մեթոդները և որոշումների ավտոմատացման մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «Ըմբիշների մրցակցային պայմաններում որոշման կայացման հետազոտության մեթոդաբանություն և արդյունքներ» գլխում ներկայացվում են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կազմակերպման առանձնահատկությունները, օգտագործված մեթոդների հիմնավորումը և էմպիրիկ հետազոտության արդյունքների մանրամասն վերլուծությունը:

3.1. Հետազոտության կազմակերպում, մեթոդների հիմնավորում և ընտրանքի նկարագրություն ենթագլխում նկարագրվում են հետազոտության նպատակները, 60 բարձրակարգ ըմբիշների ընտրանքը, օգտագործված մեթոդները (ՊՇՌ, ԲՇՌ, ՇՕՌ, DSRS, MMPI-2) և 12-շաբաթյա զարգացնող ծրագիրը: Վերջին՝ **3.2. Ըմբիշների մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնների հետազոտության արդյունքների ներկայացում և վերլուծություն** ենթագլխում ներկայացվում են հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների համեմատությունը, DSRS-ի և մրցակցային արդյունավետության կապը, ռեգրեսիոն մոդելը (R^2=0.46) և ինտեգրատիվ մոդելի էֆեկտը (d=1.08):

Աղյուսակ 1.

DSRS սանդղակի ցուցանիշների համեմատական վերլուծություն

DSRS ցուցանիշ	I խումբ (n=30) M±SD	II խումբ (n=30) M±SD	t-արժեք	p-արժեք	Cohen's d
Որոշման կայացման մտահոգություններ (DMC)	15.2 ± 3.5	20.4 ± 3.8	5.73	<0.001	1.48
Որոշման կայացման	17.2 ± 3.2	21.8 ± 3.4	5.57	<0.001	1.44

ինքնագիտակցում (DMS)					
DSRS ընդհանուր միավոր	32.4 ± 6.1	42.2 ± 6.9	6.08	<0.001	1.57

Աղյուսակը ներկայացնում է հետազոտության կարևորագույն տվյալները՝ որոշումների կայացման ոճի և մրցակցային արդյունավետության միջև հակադարձ կապը: Ցածր կոգնիտիվ վերահսկողություն ունեցող ըմբիշները (DSRS<30, n=15) ցուցաբերում են ամենաբարձր հաղթանակների տոկոսը՝ 61.5±11.7%, միջին մակարդակի խումբը (DSRS 30-40, n=24) ցուցաբերում է 53.2±12.4%, իսկ բարձր կոգնիտիվ վերահսկողություն ունեցող խումբը (DSRS>40, n=21) ունի ամենացածրը՝ 45.8±13.1%: Այս գծային կապը հստակ ցույց է տալիս, որ ըմբշամարտում ավտոմատացված, ինտուիտիվ որոշումները առավելություն են՝ չափազանց շատ «մտածելը» կորցնում է գործողության արագությունը և արդյունավետությունը:



Նկար 1. Մրցակցային արդյունավետության կանխատեսիչների ռեգրեսիոն վերլուծություն

Նկարը ներկայացնում է բազմակի ռեգրեսիոն մոդելը, որը բացատրում է մրցակցային արդյունավետության դիսպերսիայի 46%-ը (R^2=0.46, p<0.001): Բարդ շարժողական ռեակցիան (ԲՇՌ) հանդիսանում է ամենաուժեղ կանխատեսիչը (β=-0.42, p<0.001), որին հաջորդում է DSRS-ը (β=-0.31, p<0.01) և ՇՕՌ-ը (β=0.28, p<0.05): Բացասական գործակիցները ցույց են տալիս, որ ավելի արագ ռեակցիաները և ավելի ցածր կոգնիտիվ վերահսկողությունը կապված են բարձր արդյունավետության հետ: 46% բացատրված դիսպերսիան սպորտային

հոգեբանության մեջ համարվում է լավ արդյունք և հաստատում է, որ մշակված ինտեգրատիվ մոդելն իրականում ունի կանխատեսողական ուժ:



(———) = ուժեղ կապ, (- - -) = թույլ կապ *** p<0.001, ** p<0.01, * p<0.05

Նկար 2. Որոշումների կայացման արդյունավետ մոդելի կորելյացիոն պլեադա

Կորելյացիոն պլեադան ներկայացնում է մոդելի չորս բաղադրիչների (հոգեֆիզիոլոգիական, կոգնիտիվ, հուզական, մետակոգնիտիվ) փոխազդեցությունը և դրանց ինտեգրատիվ ազդեցությունը: Կենտրոնում տեղակայված ինտեգրատիվ մոդելը ցույց է տալիս d=1.08 էֆեկտի չափ, որը համարվում է շատ մեծ (Cohen-ի դասակարգմամբ d>0.8): Սա ապացուցում է սիներգետիկ էֆեկտի առկայությունը՝ բոլոր բաղադրիչների համատեղ ազդեցությունը (d=1.08) զգալիորեն գերազանցում է ցանկացած առանձին բաղադրիչի ազդեցությունը: Պլեադան հստակ արտացոլում է, որ որոշումների կայացման արդյունավետությունը պահանջում է համալիր մոտեցում՝ միաժամանակ զարգացնելով բոլոր չորս ուղղություններով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ հիմնական եզրակացությունները:

1. Ըմբշամարտում որոշումների կայացման արդյունավետության ուսումնասիրությունը պահանջեց բազմագործոն ինտեգրատիվ մոդելի մշակում, որը համակարգված կերպով միավորում է հոգեֆիզիոլոգիական, կոգնիտիվ, հոգեբանական և մարզա-տեխնիկական ենթահամակարգերը: Գիտական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ մինչ այժմ բացակայում էր նման

համապարփակ մոտեցում, որը ոչ միայն ուսումնասիրում էր այս գործոնները մեկուսացված վիճակում, այլև բացահայտում էր դրանց դինամիկ փոխազդեցությունը և սիներգետիկ էֆեկտները: Մշակված մոդելի փորձարկումը հիմնավոր ապացուցեց, որ ինտեգրատիվ համակարգումն էականորեն գերազանցում է ցանկացած առանձին բաղադրիչի զարգացմանը, ինչը հաստատում է համակարգային մոտեցման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

2. Հոգեֆիզիոլոգիական և կոգնիտիվ գործոնների համակարգված փոխազդեցությունը հանդիսանում է մրցակցային արդյունավետության հիմնաքարը: Բարդ շարժողական արձագանքը և անտիցիպացիայի ճշտությունը հանդես են գալիս որպես որոշումների կայացման ամենաուժեղ կանխորոշիչներ, մինչդեռ միջազգային մակարդակի ըմբիշների առավելությունը կայանում է ոչ թե առանձին ցուցանիշների բացարձակ արժեքներում, այլ այս գործընթացների համակարգված աշխատանքի և իրավիճակային հարմարեցման արդյունավետության մեջ: Որոշումների կայացման ոճերի ուսումնասիրությունը հաստատեց ինքնաշխատ որոշումների ուղղակի կապը մրցակցային հաջողության հետ, իսկ վարպետ ըմբիշների համար բնորոշ է տրամաբանական և ինքնաբուխ ոճերի ճկուն համադրումը՝ կախված մրցակցության փուլից և իրավիճակից:

3. Մետակոգնիտիվ գործառույթները՝ սեփական կոգնիտիվ գործընթացների ռեֆլեքսիան, մոնիտորինգը և կարգավորումը, կարևորագույն դեր ունեն որոշումների կայացման համակարգի ինքնակազմակերպման և ադապտացիայի գործում: Հետազոտությունը ցույց տվեց, որ բարձր մետակոգնիտիվ կարողություններ ունեցող ըմբիշները ցուցաբերում են էականորեն ավելի արդյունավետ սխալների ճանաչում, տակտիկական հարմարեցում և հետմրցակցային սովորում, մինչդեռ մետակոգնիտիվ գործառույթների անբավարարությունը դրսևորվում է կրկնվող սխալներով և մրցակցային իրավիճակների կառավարման թերություններով: Այս եզրակացությունն ընդգծում է, որ ըմբիշների մարզումային գործընթացում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մետակոգնիտիվ հմտությունների նպատակաուղղված զարգացմանը:

4. Տասներկուշաբաթյա ինտեգրատիվ զարգացման ծրագիրը, որը համադրում է հոգեֆիզիոլոգիական օպտիմալացումը, կոգնիտիվ ռազմավարությունների ընդլայնումը, մետակոգնիտիվ կարողությունների ձևավորումը և հոգեհուզական կարգավորման տեխնիկաները, ապացուցել է իր բարձր արդյունավետությունը: Փորձարարական խումբը ցուցաբերեց վիճակագրորեն խիստ նշանակալի բարելավումներ բոլոր հիմնական ցուցանիշներում, մինչդեռ ստուգիչ խումբը չցուցաբերեց էական փոփոխություններ: Մոդելավորման և զարգացման բաղադրիչներն ունեն ամենամեծ ազդեցությունը, ինչը հիմնավորում է, որ ըմբիշների որոշումների կայացման հմտությունների արդյունավետ զարգացման համար առաջնային են իրական մրցակցային իրավիճակների համակարգված մոդելավորումն ու հատուկ զարգացնող վարժությունները:

5. Հետազոտությունը ստեղծում է գիտականորեն հիմնավորված հենք որոշումների կայացման արդյունավետության բարձրացման համակարգի ներդրման համար

Հայաստանի ըմբշամարտում և ունի լայն կիրառական ներուժ: Մշակված մեթոդաբանությունը կարող է ներդրվել ինչպես ազգային հավաքականների պատրաստության գործընթացում, այնպես էլ մարզական դպրոցների և մարզիչների վերապատրաստման համակարգում: Հետազոտության արդյունքները փոխանցելի արժեք ունեն նաև այլ մենամարտային սպորտաձևերի համար, որտեղ որոշումների արագ և ճիշտ կայացումը որոշիչ է մրցակցային հաջողության համար: Մոդելի ներդրումը կնպաստի հայկական ըմբշամարտի միջազգային մրցունակության բարձրացմանը և սպորտային հոգեբանության գործնական համակարգի զարգացմանը:

Գործնական առաջարկություններ

1. **Որոշումների կայացման ավտոմատացման զարգացում.** Ըմբիշների մարզումային գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել որոշումների կայացման ավտոմատացման զարգացմանը մրցակցային իրավիճակների համակարգված մոդելավորման, ժամանակի սահմանափակմամբ վարժությունների և տարբեր ռազմավարությունների կրկնակի կիրառման միջոցով:
2. **Հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների զարգացում.** Մարզումային գործընթացում անհրաժեշտ է ներառել հատուկ վարժություններ, ուղղված հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների զարգացմանը, մասնավորապես՝ բարդ շարժողական ռեակցիայի արագության և շարժվող օբյեկտի ռեակցիայի ճշգրտության բարելավմանը:
3. **Անհատական մոտեցման կիրառում.** Հաշվի առնել ըմբիշների անհատական առանձնահատկությունները որոշումների կայացման հմտությունների զարգացման ժամանակ, կազմելով անհատական DSRS պրոֆիլներ և մշակելով անհատականացված մարզումային պլաններ:
4. **Մրցակցային իրավիճակների մոդելավորման ուժեղացում.** Հիմնվելով մոդելավորման բաղադրիչի բարձր արդյունավետության վրա (d=0.94), առաջարկվում է ուժեղացնել մրցակցային իրավիճակների մոդելավորումը մարզումային գործընթացում՝ կիրառելով մրցումային գոտեմարտեր ժամանակի սահմանափակմամբ, սթրեսային իրավիճակների մոդելավորում և հոգնածության պայմաններում գոտեմարտեր:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Погосян И.Г., Аванесян Г.М. Психологические факторы эффективности принятия решений борцами в соревновательных условиях, Научно-периодический журнал «Здоровье человека, теория и методика физической культуры и спорта». 2026- 41(1), DOI: 10.14258/zosh(2026)1.08
2. Poghosyan I.H. The influence of emotional intelligence on the decision-making process of elite wrestlers, Science in Sport: Current Issues, 2025 No2 (15):221-233, DOI: 10.53068/25792997-2025.2.15-221
3. Poghosyan I.H. The role of wrestlers individual psychological characteristic in competitive activity, 2025 Modern Psychology 8(1(16)) DOI: 10.46991/SBMP/2025.8.1.038
4. Poghosyan I.H., Miasaryan M.E., Petrosyan T. Neurodynamic resilience and pre-competition anxiety: A mixed-methods study of elite sport shooters, Journal of Physical Education and Sport, 2025 Vol. 25 (issue 10) DOI: 10.7752/jpes.2025.10240 Scopus Q3
5. Geghamyan V.Gh., Poghosyan I.H., Hovhannisyan S.V., The Impact of Competitive Regulatory Changes on Psychological Indicators Ensuring the Efficiency of a Wrestler's Performance, Теорія та методика фізичного виховання 2025 25(3) DOI: 10.17309/tmfv.2025.3.24 Scopus Q3
6. Պողոսյան Ի.Հ. Մարզիկների որոշումների կայացման հոգեբանական առանձնահատկությունները մրցակցային պայմաններում, 2025 1(14) Գիտությունը սպորտում արդի հիմնախնդիրներ DOI: 10.53068/25792997-2025.1.14-23
7. Poghosyan I.H. A study of wrestlers coping behavior characteristics in competitive conditions Science in Sport: Current Issues 3(13), DOI: 10.53068/25792997-2024.3.13-135

ПОГОСЯН ИРА ГРАНТОВНА

ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ ПРИМЕНЕНИЕ ЭФФЕКТИВНОЙ МОДЕЛИ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ В СОРЕВНОВАТЕЛЬНЫХ УСЛОВИЯХ (на примере борцов)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология. Теория и история психологии. Психология личности». Защита диссертации состоится 25 июня 2026 г., в 16:00 на заседании специализированного совета по психологии 064 КВОН по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В борьбе 42% снижения результативности элитных спортсменов связано с ухудшением эффективности принятия решений. Только 22% армянских тренеров применяют психологические упражнения для развития навыков принятия решений, в то время как в Германии и США — 78-85%. Исследования психологических аспектов принятия решений в армянской борьбе составляют лишь 5-7% от работ по спортивной психологии, в США — 25-30%. Актуальность определяется необходимостью разработки научно обоснованной многофакторной модели принятия решений, интегрирующей психофизиологические, когнитивные, эмоциональные и спортивно-технические факторы.

Цель исследования: Выявление и обоснование факторов, обусловливающих применение эффективной модели принятия решений борцов в соревновательных условиях, и разработка интегративной модели, превышающей соревновательную эффективность.

Задачи исследования

1. Провести теоретико-методологический анализ основных подходов к исследованию принятия решений в соревновательных условиях
2. Выявить психологические особенности принятия решений в борьбе и факторы, влияющие на их эффективность
3. Исследовать взаимосвязь психофизиологических показателей (ПДР, СДР, РДО), стилей принятия решений (DSRS) и соревновательной эффективности борцов
4. Разработать и экспериментально проверить интегративную модель эффективного принятия решений для борцов высокой квалификации
5. Определить практические методы развития навыков принятия решений в тренировочном процессе

Научная новизна Впервые в Армении проведено комплексное исследование принятия решений борцов с использованием психофизиологических методов (SRT, CRT, RMO) и психологических опросников (DSRS, MMPI-2). Выявлена обратная связь между когнитивным контролем (DSRS) и соревновательной эффективностью: борцы с низким когнитивным контролем (DSRS<30) демонстрируют наивысший процент побед (61,5%). Разработана интегративная

модель, объясняющая 46% дисперсии эффективности (R^2=0,46, p<0,001), где сложная двигательная реакция (CRT) является сильнейшим предиктором (β=-0,42). Установлен синергетический эффект модели (d=1,08), превышающий влияние отдельных компонентов.

Теоретическая значимость: Исследование разрабатывает многофакторную модель принятия решений, интегрирующую психофизиологические, когнитивные, эмоциональные и спортивно-технические факторы, создавая комплексную теоретическую основу для объяснения эффективности принятия решений в борьбе. Результаты расширяют понимание взаимодействия психофизиологических функций и стилей принятия решений в условиях стресса, и обогащают методологическую базу спортивной психологии через комбинированное применение количественных и качественных методов, укрепляя междисциплинарные подходы в спортивной науке. **Практическая значимость:** Разработанная 12-недельная программа продемонстрировала высокую эффективность (d=1,08) и внедряется в тренировочный процесс борцов различной квалификации. Выявленные психофизиологические показатели (CRT, RMO) и стили принятия решений (DSRS) используются для отбора и диагностики спортивного потенциала. Результаты применимы в подготовке тренеров в Государственном институте физической культуры и спорта Армении, в национальной сборной по борьбе, и адаптируемы для других единоборств (дзюдо, самбо, бокс). Практические рекомендации повышают соревновательную эффективность на 8-15%.

Достоверность результатов: Достоверность результатов обеспечивается теоретико-методологической обоснованностью, использованием валидных психофизиологических методов (SRT, CRT, RMO) и стандартизированных опросников (DSRS, MMPI-2), репрезентативной выборкой (60 высококвалифицированных борцов, 15 экспертов-тренеров), современными методами статистического анализа (корреляция, регрессия, t-критерий, Cohen's d), высокой статистической значимостью (p<0,001), экспериментальной проверкой с контрольной и экспериментальной группами, и согласованностью с международными исследованиями в области спортивной психологии.

Реализация: Результаты исследования обсуждены на заседаниях кафедры общей психологии Ереванского государственного университета, кафедры педагогики и психологии Государственного института физической культуры и спорта Армении, представлены на трех научных конференциях. Основные результаты опубликованы в восьми научных статьях. Разработанная программа внедрена в тренировочный процесс юниорской сборной Армении по вольной борьбе и используется в учебном процессе ГИФКС Армении.

Структура работы: Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем работы составляет 161 страницы, включает 9 таблиц, 7 рисунков. Список литературы содержит 187 источников, из них 166 на иностранных языках.

POGHOSYAN IRA HRANT

FACTORS DETERMINING THE APPLICATION OF AN EFFECTIVE DECISION-MAKING MODEL IN COMPETITIVE CONDITIONS (based on the example of wrestlers)

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - General psychology, theory and history of psychology, psychology of personality. The defence of the dissertation will be held on June 25, 2026, at 16:00 at the session of the Specialized Council 064 in Psychology of the HESC of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52 a.

SUMMARY

The relevance of the issue. In wrestling, 42% of performance decline in elite athletes is associated with decreased decision-making effectiveness. Only 22% of Armenian coaches apply psychological exercises for developing decision-making skills, while in Germany and the USA this indicator is 78-85%. Research on psychological aspects of decision-making in Armenian wrestling comprises only 5-7% of sports psychology studies, in the USA — 25-30%. The relevance is determined by the necessity to develop a scientifically grounded multifactorial decision-making model integrating psychophysiological, cognitive, emotional, and sports-technical factors.

Research Objective. Identification and substantiation of factors determining the application of an effective decision-making model for wrestlers in competitive conditions, and development of an integrative model that enhances competitive effectiveness.

Hypothesis. The effectiveness of wrestlers' decision-making in competitive conditions is determined by the integrated influence of psychophysiological (SRT, CRT, RMO), cognitive (decision-making styles), emotional, and metacognitive factors, and the development of an integrative model based on these factors will significantly improve competitive performance.

Main Goals.

1. Conduct a theoretical-methodological analysis of main approaches to studying decision-making in competitive conditions
2. Identify psychological characteristics of decision-making in wrestling and factors affecting their effectiveness
3. Investigate the relationship between psychophysiological indicators (SRT, CRT, RMO), decision-making styles (DSRS), and competitive effectiveness of wrestlers
4. Develop and experimentally verify an integrative model of effective decision-making for highly qualified wrestlers
5. Determine practical methods for developing decision-making skills in the training process

Scientific Novelty. For the first time in Armenia, a comprehensive study of wrestlers' decision-making was conducted using psychophysiological methods (SRT, CRT, RMO) combined with psychological questionnaires (DSRS, MMPI-2). An inverse

relationship was revealed between the level of cognitive control (DSRS) and competitive effectiveness: wrestlers with low cognitive control (DSRS<30) demonstrate the highest winning percentage (61.5%), confirming the advantage of automated decisions in wrestling. An integrative model was developed explaining 46% of competitive effectiveness variance (R^2=0.46, $p<0.001$), where complex motor reaction (CRT) acts as the strongest predictor (β=-0.42). A synergistic effect of the comprehensive model (d=1.08) was established, exceeding the influence of individual components, demonstrating the necessity of an integrative approach to psychological preparation of wrestlers.

Theoretical Significance. A multifactorial decision-making model has been developed, integrating psychophysiological, cognitive, emotional, and sports-technical factors, creating a theoretical foundation for explaining effectiveness in wrestling. The results expand understanding of the interaction between psychophysiological functions and decision-making styles under stress conditions, enrich the methodological base of sports psychology through combined application of quantitative and qualitative methods, strengthening interdisciplinary approaches.

Practical Significance. The developed 12-week program demonstrated high effectiveness (d=1.08) and is being implemented in the training process of wrestlers of various qualifications. The identified psychophysiological indicators (CRT, RMO) and decision-making styles (DSRS) are used for selection and diagnostics of athletic potential. Results are applicable in coach training at the State Institute of Physical Culture and Sports of Armenia, in the national wrestling team, and are adaptable for other combat sports (judo, sambo, boxing). Practical recommendations increase competitive effectiveness by 8-15%.

Data Reliability. The reliability of results is ensured by theoretical-methodological validity, use of valid psychophysiological methods (SRT, CRT, RMO) and standardized questionnaires (DSRS, MMPI-2), representative sample (60 highly qualified wrestlers, 15 expert coaches), modern statistical analysis (correlation, regression, t-test, Cohen's d), high statistical significance ($p<0.001$), experimental verification with control and experimental groups, and consistency with international sports psychology research.

Approbation and Adoption of the Research Results. Research results were discussed at meetings of the Department of General Psychology at Yerevan State University, the Department of Pedagogy and Psychology at the State Institute of Physical Culture and Sports of Armenia, and presented at three scientific conferences. Main results are published in eight scientific articles. The developed program has been implemented in the training process of Armenia's junior freestyle wrestling team and is used in the educational process of the State Institute of Physical Culture and Sports of Armenia.

Work Structure. The dissertation consists of an introduction, three chapters, conclusion, list of references, and appendices. The total volume of work is 161 pages, includes 9 tables, 7 figures. The list of references contains 187 sources, of which 166 are in foreign languages.